Կնքված պայմանագրի մասին հայտարարություն

ՀՀ Արագածոտնի մարզի Շենավանի միջնակարգ դպրոցի նածագծի ՀՀ Արմավիրի մարզի Ջրարբիի միջնակարգ դպրոցի տարածքում տեղակապման, տեղակապված նախագծի հեղինակային հսկողության իրականացման և դպրոցի կառուցման աշխատանքների գնում

No. A-56 AR

Ծրագրի անվանում՝ Սեյսմիկ անվտանգության բարելավման ծրագիր
Երկիր՝ Հայաստան
Վարկի համար՝ 3284-ARM (ԱԶԲ), 4351-ARM
Շնորհված ընկերություն՝ «Ղարաբաղցյան-Շին» ՍՊԸ
Հասցե՝ Ազատության 5/11
Քաղաք/Մարզ՝ ք. Երևան
Երկիր՝ Հայաստանի Հանրապետություն
Պատվիրատու՝ Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամ /ՀՏԶՀ/
Պայմանագրի կնքման ամսաթիվ՝ 24 դեկտեմբերի 2024թ.
Գնման ընթացակարգի եղանակ՝ «Ազգային մրցակցային մրցույթ»
Պայմանագրի գումար՝ 1,874,770,278.00 (մեկ միլիարդ ութ հարյուր յոթանասունչորս միլիոն յոթ հարյուր յոթանասուն հազար երկու հարյուր յոթանասունութ դրամ) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ:
Տևողությունը՝ շինարարական աշխատանքների մեկնարկից մինչև ավարտը, նախատեսվում է՝ 900 օր
Պայմանագրի շրջանակը.
Նախատեսված է՝
Նոր դպրոցական համալիրը կառուցվելու է գոյություն ունեցող դպրոցի տարածքում ու նախատեսված է 288 աշակերտի համար և բաղկացած է չորս (4) մասնաշենքերից, որոնք իրարից առանձնացված են հակասեյսմիկ կոնստրուկտիվ կարերով: Դպրոցի կոնստրուկտիվ համակարգը լուծված է միաձույլ ե/բ հիմնակմախքով, միաձույլ ծածկերով և դիաֆրագմա ծառայող միաձույլ երկաթբետոնյա արտաքին և ներքին պատերով: Արտաքին պատերը և վերնածածկը ջերմամեկուսացվում են: Հիմքերը ժապավենային են: Տանիքները լանջավոր են: Շենքերի մուտքերի մոտ նախատեսված են թեքուղիներ: Նախագծով նախատեսված են հաշմանդամների համար սանհանգույցներ ինչպես նաև վերելակ, ներքին ջեռուցման և օդափոխության համակարգ: Որպես ջեռուցման համակարգ հանդիսանում է կառուցվող կաթսայատունը: Կառուցվելու են նոր կաթսայատուն ու ինժեներական ցանցեր, տանիքում տեղադրվելու են արևային մարտկոցներ: Իրականացվելու է դպրոցի տարածքի ցանկապատումը և բարեկարգումը: Նախատեսվում է նոր կանաչապատ գոտիներ և նոր ծառատունկ: